Կազմված է՝ .....2023 թ.
Բաղկացած է 8 թերթից
Տպագրված է 4 օրինակից
Օրինակ .....

Հ Ա Ս Տ Ա Տ Վ Ա Ծ Է ՀՀ ՏԿԵՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ «.....» ..... 2023թ. N .....-Ա հրամանով Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահ ..... Ա.Ավետիսյան Կ.Տ	**Գ Ր Ա Ն Ց Վ Ա Ծ Է** ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ «.....».....2023թ. Գրանցման համար 264.210.864444 ՀՎՀՀ՝ 00144572 Աշխատակից՝ ..... «.....» ..... 2023թ.

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ԿԱՐԵՆ ԴԵՄԻՐՃՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՐԶԱՀԱՄԵՐԳԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

Երևան-2023

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) առևտրային

կազմակերպություն հանդիսացող տնտեսական ընկերություն է, որի կանոնադրական կապիտալը բաժանված է Ընկերության նկատմամբ բաժնետերերի պարտավորական իրավունքը հավաստիացնող որոշակի թվով բաժնետոմսերի:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2022թ. հոկտեմբերի 20-ի N1627-Ա որոշման համաձայն՝ Ընկերությունը ստեղծվել է «Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության (պետական գրանցման համար՝ 264.210.864444) վերակազմավորման արդյունքում և հանդիսանում է նրա իրավունքների և պարտավորությունների իրավահաջորդը:

3. Ընկերության ստեղծման պահին նրա միակ բաժնետեր (100% բաժնետոմսերի միակ սեփականատեր) է հանդիսանում Հայաստանի Հանրապետությունը (այսուհետ՝ Բաժնետեր):

4. Ընկերությունն իր գործունեության ընթացքում գործում է Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք), «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) պահանջներով, ինչպես նաև այլ օրենքներով, իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:

5. Ընկերության ֆիրմային անվանումն է՝

հայերեն լրիվ՝ «Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» Փակ բաժնետիրական ընկերություն

կրճատ՝ «ԿԴՄՀՀ» ՓԲԸ

ռուսերեն լրիվ՝ Закрытое Акционерное Общество «Спартивно-концертный комплекс имени Карена Демирчяна»

կրճատ՝ ЗАО «СКК имени Карена Демирчяна »

անգլերեն լրիվ՝ «Sport and concert complex after Karen Demirchyan» Closed Joint Stock Company

կրճատ՝ «SCC after Karen Demirchyan» CJSC

6. Ընկերության գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան Ծիծեռնակաբերդի զբոսայգի 1, 0028:

2. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

7. Ընկերության գործունեության նպատակը՝ ծառայություններ մատուցելուց և աշխատանքներ կատարելուց շահույթ ստանալն է:

8. Ընկերության գործառնություններ են.

1) մշակույթի, սպորտի (մարզական), սոցիալական, կրթության (նպատակ ունենալով աջակցելու՝ հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով անձի դաստիրակության գործընթացին) ոլորտներին առնչվող հանրային և մասնավոր տարաբնույթ միջոցառումների նախաձեռնումը և (կամ) իրականացումը.

2) հանրապետական նշանակության հուշարձան (համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հոկտեմբերի 7-ի N 1616-Ն որոշման N 1 հավելվածի) հանդիսացող՝ «Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» կառույցի պահպանությանը և հուշարձանի հանրահռչակմանն ուղղված ծրագրերի մշակումը և (կամ) իրականացումը.

3) Ընկերությունը կարող է իրականացնել օրենքով չարգելված ցանկացած ձեռնարկատիրական գործունեություն՝ պահպանելով «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» օրենքի դրույթները:

3. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ, ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

9. Ընկերությունն առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձ է: Ընկերության կազմակերպաիրավական ձևը փակ բաժնետիրական ընկերությունն է: Ընկերությունը համարվում է ստեղծված և կարող է գործել Ընկերության սահմանված կարգով պետական գրանցման պահից:

10. Ընկերությունն իրավունք ունի օրենքով սահմանված կարգով բացել բանկային հաշիվներ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների բանկերում, ինչպես Հայաստանի Հանրապետության դրամով, այնպես էլ արտարժույթով:

11. Ընկերությունն ունի իր ֆիրմային անվանմամբ հայերեն, ռուսերեն և անգլերեն գրառումներով, Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով կլոր կնիք, դրոշմներ և ձևաթղթեր, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով գրանցված խորհրդանիշ, ապրանքային, առևտրային և այլ նշաններ:

12. Ընկերությունն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով:

13. Ընկերությունը պատասխանատու չէ Բաժնետիրոջ պարտավորությունների համար:

Բաժնետերը պատասխանատու չէ Ընկերության պարտավորությունների համար:

14. Հայաստանի Հանրապետությունը և համայնքները պատասխանատվություն չեն կրում Ընկերության պարտավորությունների համար:

Ընկերությունը պատասխանատվություն չի կրում Հայաստանի Հանրապետության և համայնքների պարտավորությունների համար:

15. Ընկերությունն իրավունք ունի.

- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր ձևերով ձեռք բերել գույք, այդ թվում՝ արժեթղթեր, տիրապետել, օգտագործել ու տնօրինել դրանք և դրանցից ստացված եկամուտը,
- ինքնուրույն կազմավորել իր ֆինանսական ռեսուրսները, այդ թվում փոխառու միջոցների ներգրավմամբ, Հայաստանի Հանրապետությունում և այլ պետություններում ստանալ բանկային և առևտրային վարկեր, այդ թվում՝ արտարժույթով,
- օրենսդրությամբ սահմանված կարգով իր անունից թողարկել և տարածել արժեթղթեր,
- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել պայմանագրեր և կրել պարտավորություններ,
- ինքնուրույն ընտրել իր արտաքին տնտեսական գործունեության վարման կարգը, այն իրականացնել անմիջականորեն, առանց միջնորդի կամ այլ կազմակերպության միջոցով,
- ինքնուրույն պլանավորել իր գործունեությունը, որոշել արտադրանքի, կատարվող աշխատանքների և մատուցվող ծառայությունների ծավալը, գները, իրենց մատակարարներին և արտադրանքը սպառողներին,
- ստեղծել մասնաճյուղեր և բացել ներկայացուցչություններ Օրենքի և այլ իրավական ակտերի դրույթներին համապատասխան,
- հիմնադրել իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող դուստր և կախյալ ընկերություններ և մասնակցել դրանցում:

16. Ի թիվս սույն կանոնադրությամբ նկարագրված իրավունքների և պարտականությունների Ընկերությունը կարող է ունենալ և կրել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ իրավունքներ և պարտականություններ:

4. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ

17. Ընկերության կանոնադրական կապիտալը պարտատերերի շահերը երաշխավորող Ընկերության գույքի նվազագույն չափն է, որը համալրվում է Հայաստանի Հանրապետության դրամով:

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 500,000.0 հազ.դրամ, որը բաժանված է 25000 հատ հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսի, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 20.0 հազ. դրամ: Ընկերության բոլոր բաժնետոմսերը պատկանում են Հայաստանի Հանրապետությանը: Ընկերության 100 տոկոս պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերի փաթեթի կառավարման լիազորությունները վերապահված են Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին:

5. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

18. Ընկերության գործունեության տարեկան արդյունքներով ստացված համախառն եկամտի և իրավական ակտերով թույլատրված նվազեցումների դրական տարբերությունը՝ հարկվող շահույթը, ենթակա է հարկման՝ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրության համաձայն:

19. Ընկերության շահութաբաժինը վճարվում է Ընկերության զուտ շահույթից (կուտակված շահույթից):

20. Տարեկան շահութաբաժինների վճարման ժամկետը սահմանվում է բաժնետերերի ընդհանուր տարեկան ժողովի՝ շահութաբաժիններ վճարելու մասին որոշմամբ:

6. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

21. Ընկերության կառավարման բարձրագույն մարմինը բաժնետերերի ընդհանուր ժողովն է:

22. Ընկերությունը պարտավոր է ամեն տարի գումարել բաժնետերերի տարեկան ժողով: Ընկերության բաժնետերերի տարեկան ժողովը գումարվում է հերթական ֆինանսական տարվա ավարտից հետո՝ 6 ամսվա ընթացքում:

Բաժնետերերի տարեկան ժողովից բացի գումարվող Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովները համարվում են արտահերթ: Ընկերության արտահերթ ժողովներ գումարվում են անհետաձգելի հարցերի քննարկման համար:

23. Ընդհանուր ժողովի անցկացման տարին, ամիսը, ամսաթիվը և կարգը, ինչպես նաև բաժնետերերին ընդհանուր ժողովի անցկացման մասին ծանուցման կարգը, բաժնետերերին տրամադրվող նյութերի ցանկը Ընկերության գործադիր մարմնի ներկայացմամբ սահմանում է Ընկերության ամենախոշոր բաժնետերը (բաժնետոմսերի ամենամեծ քանակի սեփականատերը)՝ սույն կանոնադրության և Օրենքի պահանջներին համապատասխան:

24. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի իրավասությանն են պատկանում՝

1) Ընկերության կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների և լրացումների կատարումը, Ընկերության կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ.

2) Ընկերության վերակազմակերպումը.

3) Ընկերության լուծարումը.

4) լուծարային հանձնաժողովի նշանակումը, ամփոփ, միջանկյալ և լուծարային հաշվեկշիռների հաստատումը.

5) տնօրենների խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը, նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.

6) հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը.

7) բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով Ընկերության կանոնադրական կապիտալի չափի ավելացումը.

8) բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացման, բաժնետոմսերի ընդհանուր քանակի կրճատման նպատակով Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերման, ինչպես նաև ձեռք բերված կամ հետ գնված բաժնետոմսերի մարման ճանապարհով Ընկերության կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը.

9) Ընկերության գործադիր մարմնի (միանձնյա կամ կոլեգիալ) ձևավորումը, լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, ինչպես նաև Ընկերության գործադիր մարմնի լիազորությունները ժամանակավորապես իրականացնող պաշտոնատար անձի նշանակումը.

10) Ընկերության աուդիտն իրականացնող անձի հաստատումը.

11) Ընկերության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների հաշվի հաստատումը, շահույթների և վնասների բաշխման հաստատումը, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը.

12) բաժնետոմսերի բաժանումը և համախմբումը (կոնսոլիդացիան).

13) ժողովի վարման կարգի հաստատումը.

14) խոշոր գործարքների կնքման մասին որոշման ընդունումը.

15) Օրենքով նախատեսված դեպքերում Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերումը և հետգնումը.

16) Ընկերության ղեկավար պաշտոնատար անձանց (խորհրդի նախագահի կամ անդամի, տնօրենի, գլխավոր տնօրենի, տնօրինության անդամի) աշխատանքի վարձատրության պայմանների որոշումը.

17) Ընկերության կողմից դուստր կամ կախյալ ընկերությունների ստեղծումը.

18) Ընկերության կողմից դուստր կամ կախյալ ընկերություններում մասնակցությունը.

19) Օրենքով, այլ օրենքներով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ որոշումների ընդունումը:

25. Բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշումներն ընդունվում են ժողովին մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների պարզ մեծամասնությամբ:

Սույն կանոնադրության 24-րդ կետի 1)-ին, 2)-րդ, 4)-րդ, 6)-րդ և 14)-րդ ենթակետերում թվարկված հարցերով որոշումներն ընդունում է ժողովը՝ դրան մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով:

Սույն կանոնադրության 24-րդ կետի 3)-րդ, 8)-րդ և 12)-րդ ենթակետերում սահմանված հարցերով որոշումները ընդունում է ժողովը՝ դրան մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով, սակայն ոչ պակաս քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 2/3-ից:

26. Ընկերության բաժնետեր չհանդիսացող խորհրդի և գործադիր մարմնի անդամները՝ բաժնետերերի ժողովին մասնակցում են խորհրդակցական ձայնի իրավունքով:

Ընկերության աուդիտն իրականացնող անձը մասնակցում է բաժնետերերի ժողովին, եթե նրա եզրակացությունն առկա է գումարվող ժողովի նյութերում:

7. ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

27. Օրենքի 83-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ պարբերության համաձայն Ընկերությունում կարող է ստեղծվել տնօրենների խորհուրդ: Այն դեպքում, եթե Ընկերությունում խորհուրդ չի ստեղծվում՝ նրա իրավասություններն իրականացնում է բաժնետերերի ժողովը:

Խորհուրդ չստեղծվելու դեպքում Օրենքի 84-րդ հոդվածի 1-ին մասի 2-4-րդ կետերով սահմանված հարցերի վերաբերյալ որոշումներն ընդունում է բաժնետերերի ժողովը:

8. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԻԱՆՁՆՅԱ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆԸ

28. Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացվում է Ընկերության գործադիր մարմնի՝ միանձնյա գործադիր մարմնի կողմից (այսուհետ՝ Տնօրեն), որը գործում է Օրենքով սահմանված իր իրավասությունների շրջանակներում:

29. Տնօրենը կարող է ունենալ տեղակալներ, որոնց նշանակում է Ընկերության տնօրենը:

30. Տնօրենը՝

1) տնօրինում է Ընկերության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Ընկերության անունից.

2) ներկայացնում է Ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում.

3) գործում է առանց լիազորագրի.

4) տալիս է լիազորագրեր.

5) սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում նաև աշխատանքային: Ընդ որում՝ գրավի, փոխառության կամ վարկային պայմանագրեր կարող են կնքվել բացառապես Ընկերության ընդհանուր ժողովի որոշման առկայությամբ.

6) բանկերում բացում է Ընկերության հաշվարկային (այդ թվում՝ արտարժույթի) և այլ հաշիվներ: Հաշիվներ կարող է բացել նաև գանձապետարանում.

7) առաջարկություններ է նախապատրաստում Ընկերության բաժնետոմսերի դիմաց վճարվող շահութաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ.

8) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

9) սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Ընկերության աշխատակիցներին.

10) աշխատակցի նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ:

9. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՒՄԸ

31. Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգման նպատակով Ընկերությունը կարող է ներգրավել Ընկերության կամ լիազորված մարմնի հետ գույքային շահերով չկապված աուդիտորի (կազմակերպություն կամ ֆիզիկական անձ): Ընկերության աուդիտն իրականացնող անձն Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգման արդյունքում ներկայացնում է գրավոր եզրակացություն: Ընկերության աուդիտն իրականացնող անձը հաստատվում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից:

10. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

32. Հայաստանի Հանրապետության տարածքում և նրանից դուրս Ընկերությունը չունի մասնաճյուղեր և ներկայացուցչություններ:

11. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼԸ

33. Ընկերության կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելը, ինչպես նաև Ընկերության նոր խմբագրությամբ կանոնադրության հաստատելը տեղի է ունենում Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ, որն ընդունվում է ժողովին մասնակցած քվեարկող բաժնետերերի ձայների 3/4-ով, իսկ կանոնադրական կապիտալի չափի մեծացման հետ կապված դեպքերում՝ ձայների մեծամասնությամբ (այլ բաժնետերեր լինելու դեպքում):

34. Մասնաճյուղի և (կամ) ներկայացուցչության ստեղծման կամ գործունեության դադարեցման հետ կապված տեղեկությունները մտցվում են Ընկերության կանոնադրության մեջ: Այդ տեղեկությունների փոփոխությունների հետ կապված կանոնադրության փոփոխությունները ուժի մեջ են մտնում պետական գրանցումն իրականացնող մարմիներին ծանուցելու պահից:

35. Ընկերության կանոնադրության մեջ կատարված փոփոխությունները և լրացումները, ինչպես նաև Ընկերության նոր խմբագրությամբ կանոնադրությունը երրորդ անձանց համար ուժի մեջ են մտնում դրանց պետական գրանցման պահից, իսկ սույն կանոնադրությամբ սահմանված դեպքերում՝ պետական գրանցումն իրականացնող մարմնին ծանուցելու պահից: Սակայն Ընկերությունը և նրա բաժնետերերը նման փոփոխությունները հաշվի առած երրորդ անձանց հետ ունեցած հարաբերություններում իրավունք չունեն վկայակոչել այդ փոփոխությունների գրանցման բացակայությունը:

12. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

36. Ընկերությունը բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ, կարող է վերակազմակերպվել կամ լուծարվել: Եթե լուծարվող Ընկերության գույքի արժեքն անբավարար է պարտատերերի պահանջները բավարարելու համար, ապա այն կարող է լուծարվել միայն սնանկության հետևանքով: Ընկերության վերակազմակերպման և լուծարման այլ հիմքերը, ինչպես նաև նրա վերակազմակերպման ու լուծարման կարգը սահմանվում են Օրենսգրքով, Օրենքով և այլ օրենքներով:

37. Ընկերությունը կարող է վերակազմակերպվել Օրենքով սահմանված կարգով միաձուլման, միացման, բաժանման, առանձացման և վերակազմավորման միջոցով:

38. Ընկերությունը, բացառությամբ այլ իրավաբանական անձի միացման ձևով վերակազմակերպման դեպքի, վերակազմակերպված է համարվում նոր ստեղծված իրավաբանական անձի պետական գրանցման պահից: Ընկերությունն այլ իրավաբանական անձի հետ միացման ձևով վերակազմակեպվելիս, վերակազմակերպված է համարվում միացող ընկերության գործունեությունը դադարելու վերաբերյալ իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում գրառման պահից:

39. Ընկերության լուծարման և լուծարման հանձնաժողովի ստեղծման մասին որոշումը կայացնում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը՝ դրան մասնակցող քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով, սակայն ոչ պակաս քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 2/3-ից (այլ բաժնետերեր լինելու դեպքում): Լուծարման հանձնաժողով կազմելու պահից նրան են անցնում Ընկերության գործերի կառավարման բոլոր լիազորությունները: Լուծարվող Ընկերության անունից դատարանում հանդես է գալիս լուծարման հանձնաժողովը: Ընկերության լուծարման գործընթացում գտնվելու մասին տեղեկությունները (այդ թվում լուծարման հանձնաժողովի կազմը) ենթակա են գրանցման իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում: Լուծարումն իրականացվում է Օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

40. Ընկերության լուծարումը համարվում է ավարտված, իսկ նրա գոյությունը՝ դադարած այդ մասին իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում համապատասխան գրանցում կատարելու պահից։